



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«11» 07 2018թ.

No 06/3-1/46576-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿՍՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2018թ. գրության
(առցանց համար՝ 2561-6AA8-81E4)

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 15-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ հարկի հաշվարկը կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Օրենսգրքի կիրառության իմաստով հաշվառման հաշվեգրման մեթոդը նշանակում է, որ հարկ վճարողը եկամուրների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման

պահից: Հարկ վճարողը հարկերի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից՝ անկախ իր կողմից իրականացվող գործարքների դիմաց հափուցումների ստացման կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների գծով մատակարարների կամ հարկային կամ մաքսային մարմիններին վճարումների կատարման պահից,

- 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի առանձին հարկադրեցական ներին վերաբերող բաժիններով սահմանված դեպքերում հարկի կամ հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դրույթների հիման վրա, եթե օրենսգրքով չեն նախատեսվում դրանց կիրառության առանձնահատկություններ,

- 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ՀՀ ռեզիդենտ կազմակերպության և ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպության (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպության՝ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատության) միջև կատարվող՝ ծառայության մատուցման արտարժույթով արտահայտված գործարքների դեպքում ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

- 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նույն մասի 1-3-րդ կետերում չնշված դեպքերում ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրսգրման, իսկ հաշվարկային փաստաթղթի բացակայության դեպքում՝ գործարքին կամ գործառնությանը վերաբերող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի կազմման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

- 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հաշվարկային փաստաթուղթը նույն հոդվածով սահմանված պահանջները բավարարող՝ հարկ վճարողի կողմից դուրս գրվող փաստաթուղթ է, որով հիմնավորվում է ապրանքի մատակարարումից, աշխատանքի կատարումից և (կամ) ծառայության մատուցումից եկամտի ստացման իրավունք ձեռք բերելը: Նույն կետի կիրառության իմաստով՝ օրենսգրքով սահմանված

դեպքերում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված՝ անկախ հաշվարկային փաստաթղթի դուրս գրման հանգամանքից,

- 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նուտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր,

- 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշիվներ դուրս չեն գրում, մասնավորապես՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նշված դեպքերում հարկային հաշվի փոխարեն կազմվում և օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով դուրս են գրվում հաշիվ վավերագրեր:

Հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ օրենսգրքի 16-րդ հոդվածով արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում առանձնահատկություններ են սահմանված հետևյալ դեպքերում՝

- ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշելու համար (1-ին կետ),

- ՀՀ տարածքում ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կամ ռեզիդենտ ֆիզիկական անձի և ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի՝ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատության) միջև կատարվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշելու համար (2-րդ կետ),

- ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքի գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, օրենսգրքի 4-րդ բաժնի համաձայն, գործարքի կողմ համարվող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կամ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի՝ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատության կողմից կրելու դեպքում

ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշելու համար (2-րդ կետ),

- հարկային գործակալի կողմից վճարվող՝ հարկման ենթակա եկամուտներից հարկի գումարը հաշվարկվման համար (3-րդ կետ):

- 1-ին մասի 1-3-րդ կետերում չնշված դեպքերում ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները որոշելու համար (4-րդ կետ)

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք որ.

1) ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությանը ծառայությունների մատուցման գործարքների մասով ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից դուրս են գրվում օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր, անկախ՝ ծառայությունների մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունը կամ ՀՀ-ից դուրս համարվելու հանգամանքից,

2) երբ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությանը մատուցվում են այնպիսի ծառայություններ, որոնց մատուցման վայրը, օրենսգրքի 39-րդ հոդվածին համապատասխան, համարվում է ՀՀ-ից դուրս, օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ծառայությունների մատուցման գործարքի մասով ձևավորվող հարկման բազաները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի դուրսգրման, իսկ հաշվարկային փաստաթղթի բացակայության դեպքում՝ գործարքին կամ գործառնությանը վերաբերող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի կազմման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

3) ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությանը ՀՀ տարածքում (երբ ծառայությունների մատուցման վայրը համաձայն օրենսգրքի 39-րդ հոդվածի համարվում է Հայաստանի Հանրապետությունը) ծառայությունների մատուցման արտարժույթով արտահայտված գործարքների մասով ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշելու համար անհրաժեշտ է առաջնորդվել օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով: Այս դեպքում ձևավորվող հարկման բազաները և սկզբնական արժեքները որոշվում են համապատասխան հաշվարկային փաստաթղթի (օրենսգրքով սահմանված) դուրս գրման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին

փոխարժեքից: Ընդ որում, արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում հարկման բազաների և սկզբնական արժեքների որոշման համար որպես տվյալ օրվա ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեք հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից մինչև տվյալ օրվա ժամը 16:00-ն հրապարակված միջին փոխարժեքը, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

Հարգանքով՝

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 8/13/2018 13:44:01 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.' ՎԱՇՍՎ հարկերի և պարտադիր վճարների
Մեթոդաբանության թիվ 1 բաժին,
Հեռ. 060-544-781

